ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

08.09.2018թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկան/
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան /քարտուղար/
Խորհրդի նիստին մասնակցում էին Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Հ. Մարգարյանը, Պ. Ասիլբեկյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, Տ. Թամրազյան, Ս. Վարդումյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Մաղաթյանը, ՈՒԳԸ նախագահ Տ. Թիրաբյանը, Մ. Մելիքսեթյանը, Ա. Ղարախանյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Գ. Ավետիսյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

Օրակարգ

1. 2018-19 ուս. տարվա «Ընդհանուր տնտեսագիտության», «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների տարեկան աշխատանքային և ժամանակացույց-պլանների քննարկում և հաստատում / Զեկ Գ. Ավետիսյան/:
2. 2018-2019 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում /Զեկ Գ. Ավետիսյան/:
3. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչների առաջադրում և հաստատում / Զեկ Գ. Ավետիսյան/:
4. 2019թ. բակալավրի կրթական ծրագրերով ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում /Զեկ Գ. Ավետիսյան/:
5. Ընթացիկ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին - 2018-2019 ուս. տարվա ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների (Ընդհանուր տնտեսագիտություն, Տուրիզմի կառավարման և մշակութաբանություն) աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Մ. Միքայելյանը ներկայացրեց 2018-2019 ուս. տարվա համար կազմած ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը:

Գ. Ավետիսյանը նկատեց, որ քննարկման ներկայացված ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը ներառում է ամբիոնի գիտակրթական գործունեության բոլոր հիմնական ուղղությունները, ընթացակարգերն ու գործընթացները: Դա նպաստում է ուսումնական տարվա ընթացքում ամբիոնային աշխատանքների ճիշտ կազմակերպման և ամբիոնի աշխատանքների ակտիվացման գործին: Այդ աշխատանքը պետք է սկսել 2018-2019 ուս. տարվա ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի ճշգրտմամբ: Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչը ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց 2018-2019 ուս. տարվա ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը /նախագիծը կցվում է/:
Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց 2018-2019 ուս. տարվա համար կազմած ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը: Ամբիոնների աշխատանքային պլանները բխում են ֆակուլտետի միջնաժամկետ աշխատանքային պլանից և համապատասխանում էր ընդհանուր ծրագրերին:

Արտահայտվեցին - Տ. Թամրազյանը, Ա. Պոտոսյանը:
Նրանք նշեցին, որ կատարված ուսումնասիրության և համեմատական վերլուծության արդյունքում պարզվել է, որ ամբիոնների աշխատանքային պլանները ըստ թեմատիկ և ժամանակագրական կառուցվածքի, համապատասխանում են ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանին և, հավանություն տալով, ներկայացրին քննարկման ու հաստատման:

Որոշեցին - հաստատել Ընդհանուր տնտեսագիտության և Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների աշխատանքային պլանները:

2. Լսեցին - 2018-2019 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում /Զեկ Գ. Ավետիսյան/:

Դեկանի ժ/պ հիշեցրեց, որ մասնաճյուղում գործում է անվանական կրթաթոշակի նշանակման կարգ: Մասնավորապես շեշտվեց երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմության և բարձր հասարակական ակտիվության արձանագրումը: Ըստ այդ կարգի՝ անվանական կրթաթոշակի հավակնորդին ներկայացված պահանջները բավարարում են մի քանի ուսանողներ: «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի ներկայացվեց ֆակուլտետի Սերվիս մասնագիտության IV կուրսի ուսանողուհի Նարինե Մխիթարյանը: «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի ներկայացվեց Սերվիս

մասնագիտության III կուրսի ուսանող Տիգրան Ղուշչյանը: Ակադեմիական պահանջները չբավարարելու պատճառով «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակը որևէ մեկին չշնորհվեց:

Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Գ. Հովհաննիսյանը, Տ. Թիրաբյանը:

Արտահայտվողները նշեցին, անվանական կրթաթոշակի ներկայացված վերոհիշյալ ուսանողները արժանի են ոչ միայն ցուցաբերած ակադեմիական առաջադիմությամբ, այլ նաև հասարակական ակտիվությամբ ու օրինակելի վարքագծով: Նրանք անդամակցում են մասնաճյուղում գործող ուսանողական ինքնակառավարման կառույցներին:

Որոշեցին - Հավանության արժանացնել 2017-2018 ուս. տարվա առաջին կիսամյակի Մոնթե Մելքոնյան և Վազգեն Սարգսյան անվանական կրթաթոշակի հավակնորդներ Տիգրան Ղուշչյանի և Նարինե Մխիթարյանի թեկնածությունները և ներկայացնել տնօրենության հաստատմանը:

3. Լսեցին – Տնտեսագիտության ֆակուլտետից ԵՊՀԻՄ-ի գիտական խորհրդի անդամի առաջադրում /Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը իրազեկեց, որ ըստ ԵՊՀ հիմնադրամի ԻՄ գիտական խորհրդի կանոնակարգի ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդն է որոշում ստորաբաժանումներից ընտրովի մասնակիցների թիվը: Տնտեսագիտության ֆակուլտետից մասնաճյուղի գիտական խորհրդի կազմում պետք է առաջադրվեն երկու ներկայացուցիչ: Նա առաջարկեց Մ. Միքայելյանի և Գ Հովհանիսյանի թեկնածությունները:

Արտահայտվեցին- Պ. Ասիլբեկյանը, Ա. Սարիբեկյանը:
Նրանք նշեցին ներկայացուցիչների դերը ֆակուլտետում, նրանց ավանդը գիտության մեջ:

Որոշեցին -Տնտեսագիտության ֆակուլտետից ԵՊՀԻՄ գիտական խորհրդի անդամ առաջադրել Մ. Միքայելյանի և Գ Հովհանիսյանի թեկնածությունները:

4. Լսեցին- 2019թ. բակալավրի կրթական ծրագրերով ընդունելության մասնագիտությունների ցանկը/Զեկ Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2019թ բակալավրի կրթական ծրագրերով ընդունելության մասնագիտությունների ցանկը: Նա խոսեց այսօր աշխատաշուկայում առկա տենդենցների մասին: Առաջարկեց քննարկումները ծավալել նկատի առնելով աշխատաշուկայում

ձևավորված պահանջները: Այսօր աշխատաշուկայից ստացվող ազդակները վկայում են, որ «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունները ունեն պահանջարկ:

Արտահայտվեցին- Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը,Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը: Նրանք հավանություն տվեցին 2019թ. բակալավրի կրթական ծրագրերով ընդունելության մասնագիտություններին:

Որոշեցին - հավանություն տալ և 2019թ. շարունակել ընդունելությունը Ֆինանսներ և Զբոսաշրջություն մասնագիտություններով:

Գիտխորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*

Քարտուղար՝ *Ա.Ալեքսանյան*